

հազարապետն էր խորհրդոցն Աստուծոյ, աղաւթից կարաւտեր եւ աղաչէր՝ ո՞րչափ եւս առաւել այժմու մարդիկս, զգածեալ բազում տկարութեամբ:

148 ¹Իսկ Յայոց արեղէնքս² առ դառնաշունչ նախանձու, որ միացեալ է ի սիրտս նոցա՝ զնոցունց հակառակսն երկնէն, եւ արդարեւ ըստ ասացածի մարգարէին՝ *Յղանան զցաւս եւ ծնանին*³ *զանաւրենութիւն*^Բ. աղաւթս իսկ չառնէն ի վերայ ասողին. այլ եւ եթէ յանկարծ շնորհի բան ի մարդասիրեն՝ հեղձնուն ի նախանձուէ: 149 Եթէ զոք տեսանեն ի ժողովրդէնէն եթէ գովէ՝ ծաղր առնելով ամաչեցուցանեն. «Արդ լռել ինչ, ասեն, չգիտէ, եւ ընդ վայր աղաղակէ եւ քրքուի»: 150 Իսկ Յունաց ժողովուրդսն եւ տղայքն անգամ ի վերայ ուսոց ծնողացն, շարժեալ զձեռներն ի գովութիւն այլոցն՝ ձայնս անյաւդակապս⁴ արձակեալ⁵ յայթռնէն⁶: 151 Եւ դոքա նստին գլխարկեալք, պատատեալք երեսաւք⁷, որպէս առ հոտեալ դիական, պապանծեալք որպէս համր դէ: 152 Եւ եթէ գթացեալ մարդասիրին, կամիցի տալ բան խրատու ի ժողովրդոցն փրկութիւն, հայեցեալ ի դառն խորհրդոցն նոցա որոճմունս՝ յինքն ամփոփեալ արգելու զշնորհն: 153 Անդիմակայ արդարեւ, ըստ գրելումն յԱրհնութիւնս արհնութեանց, երկոքին սոքա, սեր եւ նախանձ. *Թռիչք նորա թռիչք բոցոյ հրոյ*^Գ. յորոց իւրաքանչիւր ոք յայսց ի բարի վարողացն՝ արքայութիւն առթէ, եւ ի չարիս աճեցուցչացն՝ զգոժիս ժառանգեցուցանէ:

154 Եւ արդ՝ իցէ՞ որ ի ժամանակս նմանող մարգարէին Երեմիայի, որ ասէր ողբալով, թէ՞ *Ո՞ տայր զգլուխս իմ ի ջուր, եւ զաչս յաղբերս արտասուաց, եւ թող նստեալ լայի զթշուառութիւն աշխարհիս*^Դ:

155 Եւ ասեն. «Ի նախնումն գիտնաբար խաւսէր Ղազար, եւ այժմ անգիտաբար»: 156 Մինչ ի դոսա դեռ եւս լռեալ էր նախանձն՝ յասողս զաւրացեալ էր շնորհն. իսկ յորժամ տեսին զբազմութիւն ժողովրդոցն յաւժարեալս⁹ ի լսել, յորդորեալս ի գովութիւնս¹⁰, պատմելով միմեանց զշնորհին յորդոր-

1 *Ձ. լուսանցքում նոր գլխի նշան՝ «*

2 *արեղէքս (թերեւս լաւագոյն, = արեղայքս)*

3 *Ատ. ծնանեն*

Բ *Ես. ԾԹ 4*

4 *ԲԳտ. անյոդակապէս*

5 *ՁԱտ. յարձակեալ. այսպէս ըստ ԲԳտ.*

6 *Ատ. ենթադրում է՝ արձակեալ կայթռնէն*

7 *Թերեւս ուղղելի՝ պոստեալք երեսօք*

Գ *Երգ. Ը 6*

8 *SS. չիք թէ*

Դ *Երեմ. Թ 1*

9 *Ձ. յօժարելս*

10 *Վ. ի գովութիւն*